ՆԱԽԱԳԻԾ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի N 870-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 870-Ն որոշման N1 հավելվածի 117-րդ և 149-150-րդ կետերը։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը։

ՀՀ կրթության և գիտության նախարար Սպարտակ Մեյրանյան

ՏԵՂԵԿԱՆՔ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի N870–Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի N870–Ն որոշման «Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության միջոցառումների ծրագիր» հավելված N1-ի 117-րդ՝ «Հայաստանի Հանրապետությունում երկաստիճան աստիճանաշնորհման համակարգի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը», 149-րդ՝ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը» և 150-րդ՝ «Գիտության ոլորտի զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը» կետերով նշված իրավական ակտերը կոչված են կանոնակարգելու գիտության ոլորտն ամբողջությամբ առնվազն առաջիկա 1-2 տասնամյակներում: Դրանք ունեն հասարակական մեծ հնչեղություն: Կարիք ունեն գիտական հասարակայնության լայն շրջանակներում հավուր պատշաճի քննարկումների, 2-3 ամիսների ընթացքում՝ ներգրավելով ոլորտի լավագույն մասնագետներին:

ՀՀ կառավարության 2008թ. գործունեության միջոցառումների ծրագրով 117, 149 և 150 կետերով նախատեսված երեք հիմնարար և ծանրակշիռ միջոցառումների կատարման ժամկետ նշված է՝ 2008թ. դեկտեմբերը, ինչն անհնարին է դարձնում պատշաճ մակարդակով քննարկումների կազմակերպումը և որակյալ իրավական ակտերի մշակումը:

Նշված միջոցառումների կատարման ժամկետների տեղափոխությունը 2009 թվական պայմանավորված է նաև ՀՀ կառավարության սոցիալական վարչության 2008թ. հոկտեմբերի 20-ի թիվ 02/14.1/3406.08 գրությամբ ներկայացված զեկուցագրի 4-րդ կետով՝ «Հայաստանի Հանրապետությունում գիտության զարգացման պետական ռազմավարությանը» հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծ»-ը պետք է նախորդի մյուս միջոցառումներին, քանի որ դրանք բխելու են գիտության զարգացման պետական ռազմավարությունից:

ՀՀ վարչապետի 2008 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 01/23.1/3473-08 հանձնարարականի համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն

առաջարկում է այդ միջոցառումները ներգրավել ՀՀ կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագրում։

Նշված միջոցառումների կատարման ժամկետները 2009թ. տեղափոխման արդյունքում հնարավորություն կընձեռի ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեին, պահանջված որակով և նշված ժամկետներում մշակել իրավական ակտերի նախագծերը, կազմակերպել հասարակական լայն քննարկումներ և կատարել ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված գիտության ոլորտի բարեփոխումներն ապահովող միջոցառումները։

Ս. Սեյրանյան